«ԾՄԱԿՈՒՏԸ ԵՍ ԵՄ...»

– Ձեր առաջին գրական ելույթից անցել է քսանհինգ տարի: Ի՞նչ կասեք Ձեր անցած ստեղծագործական ուղու, Ձեր թեմայի մասին, ինքներդ ինչպե՞ս եք գնահատում քսանհինգ տարվա Ձեր գրական վաստակը:

– Քիչ եմ գրել և դրանում մեղքի իմ բաժինն այնքան էլ մեծ չէ: «Սհնիձորի» չափազանցված արձագանքը, «Մենք ենք, մեր սարերը» վիպակի և ապա կինոսցենարի վիճարկումը ինչքա՜ն ուժ խլեցին ինձանից, որ կարող էր դառնալ գրական վաստակ, գեղարվեստական արժեք: Կինոյում անցկացրած տարիները կորսված եմ համարում, կինոն ինձ միայն դառը հիասթափություն ու ծանր պարտություններ տվեց՝ բացառությամբ, թերևս, «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի, որ Հենրիկ Մալյանի հաջողված էկրանավորումներից է: «Տերը» ժողովածուն տպագրելու մտադրություն չունեի, գրվել էին որպես գրական սցենարներ, բայց հրապարակեցի հանդիսական-ընթերցողիս թողությունը հայցելու հույսով: Հիասթափություններն ու պարտությունները պիտի որ դաս լինեին, բայց ազգային մեծ կինո ունենալու հավատս չեմ կորցրել: Կուզենայի, թեկուզև ոչ իմ՝ մեզանից մեկնումեկի աշխատանքով ստեղծվեր, մեր մշակույթի նվաճում դառնար և իր ողջ շողք ու փայլով լայնածավալ երկրի էկրանով անցներ մեր ազգային կերպարը:

«Սհնիձոր» ակնարկը գրել եմ վաթսուն թվականին, «Տերը» կինովիպակը՝ ութսունին: Երկուսն էլ նույն բանն են ասում: Կարծում եմ, դեռ ուսանող՝ ասելիքս գտած եմ եղել, և նյութը այս քսան տարում չի փոխվել, գնալով բացահայտվել ու մեծացել է: «Մենք ենք, մեր սարերը» վիպակը փաստորեն կրկնել է «Սհնիձոր» ակնարկի ասելիքը: Այնտեղ «Արջը» վերնագրով մի հատված կա տեղի բնակչի և անտառի «եղբայրության» մասին, տեղի բնակիչն իրեն երկրի տեր է զգում, հետո բացահայտում է, որ իր անտառի, իր արջի, իր գյուղի առջև իր վիճակն այլ է, խորթության ու թշնամանքի

երանգ է մտնում նրա և բնության միջև: Նյութս և ասելիքս, ոչ, չեն փոխվել, ծավալվել ու խորացել են և այդ ընթացքում հաճախ, ինչպես, օրինակ, «Տաշքենդ» («Անձրևած ամպեր») վիպակում, այրական դաժանություն է պահանջվել մարդու և մարդկանց, մարդու և բնաշխարհի միջև կատարվող կործանարար փոփոխություններին նայելու համար:

– Դուք խոսեցիք բնաշխարհում ցավալի փոփոխությունների մասին: Ինչպե՞ս եք պատկերացնում այն պայքարը, որը կարող էր դրական արդյունքների հասցնել:

– Դա պետք է լիներ բոլորիս և յուրաքանչյուրիս մտքի ու ձեռքի ամենօրյա աշխատանքը, այլ ոչ թե մեկ-երկու սրտացավ գրողի կամ անտառապահի ահազանգ: Հողի կորուստը, արդյունաբերական ագրեսիան, բնության ու մարդու բախումը, ապագա սերունդների ունեզրկումը՝ սրանք ծանր խնդիրներ են, որ պիտի քննվեն ըստ ամենայնի, սահմանադրական հոդվածի հստակություն առնեն, համընդհանուր մտահոգության ու լրջության միջավայրում ճշտվեն ու գործադրվեն դրանց լուծման միջոցները: Այդ մասին պետք է խոսել կա՛մ ամբողջ երկրով մեկ ու ամբողջ ձայնով, կա՛մ բոլորովին չպետք է խոսել: Թերասացությունը լռությունից վատ է, թերասացությունը հարցը մաշում ու թմրեցնում է:

– Ի՞նչ կասեք ներկա գրական ընթացքի, Ձեր սերնդակից գրողների մասին: Ի դեպ, այս հարցը տալիս ես հիշում եմ Ձեր «Կենդանին և մեռյալը» վիպակի մի արտահայտությունը՝ «Յուրաքանչյուր թռչուն առանձին չի կարող չվել Եգիպտոս, որովհետև Եգիպտոսի տեղը չգիտի: Եգիպտոսի տեղը գիտի միայն երամը»:

– Իմ սերնդի գրողներից շատերս էին օժտված, կարելի է ասել՝ օժտված էր իմ ամբողջ սերունդը և իր ժամանակը – Աղասի Այվազյան, Մուշեղ Գալշոյան, Վարդգես Պետրոսյան, Զորայր Խալափյան, Ռուբեն Հովսեփյան, Հովհաննես Մել-քոնյան, Պերճ Զեյթունցյան, Մանուկ Մնացականյան, Նորայր Ադալյան, Կարեն Սիմոնյան. այս քանակը ուժ էր, սրանով

կարելի էր լավ գրականություն ստեղծել: Բայց բոլորս էլ նահանջ ու կանգառ ունեցանք, բոլորիս ընթացքն էլ այս կամ այն կերպ աղավաղում ունեցավ, մեկիս կինոն խանգարեց, մյուսիս մի ուրիշ բան, և հայոց լեզվի այն արծակը՝ որ բոլորս միասին էինք ստեղծելու, դեռ չի կայացել, չի իրականացել: Մեզանից շատերն են փառավոր վկայություններ տվել, ինչպես Աղասու «Կովկասյան էսպերանտոն» ու «Թիֆլիսը», բայց բոլորիս միասնական աշխարհի արտահայտությունը՝ չի՛ եղել, բոլորիս թևավորող, բոլորիս կողմնորոշող «երամային բնազդը» չի՛ առաջացել: Որևէ տեսաբան կարող է հակադրվել՝ առաջացել է, եղել է, բայց ես չիրացված հնարավորությունների մասին եմ խոսում: Հեղինակի տաղանդի լրիվ արտահայտությունը՝ չի՛ եղել, հաջողությունը չի ամրապնդվել նոր հաջողությամբ, մեծ ձեռքբերումների տոն՝ չի՛ եղել: Սերունդն իր «Խոնարհ աղջիկը» դեռ չի ստեղծել: Գուցե պահանջնե՞րս են չափազանց. չեմ վիճում: Հարկավոր է աշխատել, ցավալի բացթողումները լրացնել: Սուշեղն արդեն չկա, շատ ժամանակ չի մնացել նաև մեզ՝ սերնդին:

– Ի՞նչ կասեք երիտասարդական արծակի մասին, որն այսօր հանդես է գալիս մամուլում և առանձին գրքերով: Գրական ի՞նչ արժեքներ եք տեսնում այդ ստեղծագործություններում:

– Սպասում եմ, հետևում, կարդում: Ուղղակի հիացա Սասունիկ Թորոսյանի «Կրակե շապիկ» ակնարկի եզակիորեն ճշգրիտ մակդիրով, առհասարակ բառի ճիշտ ընտրությամբ: Վանո Սիրադեղյանի և Մերուժան Տեր-Գուլանյանի հետ կապվող իմ մեծ հույսերի մասին վաղուց եմ ասել: Ուզում եմ հիշեցնել, որ գրողներն իրենց լավագույն գործերն ստեղծել են 30–35 տարեկան հասակում. Աբովյանն իր «Վերքը», Թումանյանն իր «Անուշը», Չարենցն իր «Խմբապետ Շավարշը» գրել են այդ տարիքում, և նույնիսկ համոզված եմ՝ որ Նարեկացին է «Մատյանն» այդ տարիքում գրել: Կուզենայի, որ երիտասարդ գրողները կարողանան, հնարավորություն ունե-

նան բնության բարեհաճ վերաբերմունքի իրենց այդ տարիքը լավ օգտագործելու:

– Ի՞նչ կասեք Ձեր հերոսների մասին: Ընթերցողը ճանաչում է այդ բարի, ուժեղ, երբեմն էլ խեղճ ու միամիտ թվացող ծմակուտցիներին: Բայց կուզենար իմանալ, թե Դուք ինչ առավելագույնի եք ձգտում նրանց կերպարներն ստեղծելիս:

– Ճիշտ չեմ լինի, եթե ասեմ, թե նրանք այնտեղ են, ես գնում-նկարագրում ու վերադառնում եմ: Հերոսներիս իմ մեջ արթնացնում են միաժամանակ գրականությունը և ինքը՝ կյանքը: Հաճախ եմ ասել՝ «Ես իմ ժամանակի վավերագրողն եմ, իմ հերոսների կենսագիրը»: Դա ոչ այնքան է այդպես, բայց այդպես եմ ասում, որպեսզի բոլոր հայացքներն ուղղեմ կոնկրետ մարդուն, հարգանքի կոչեմ առ մարդկային յուրաքանչյուր կոնկրետ միավոր: Բոլորն, այո, իրական մարդիկ են, իրական կենսագրություններ: Երբեմն ուզում եմ վերացարկեմ, հավելեմ, պակասեցնեմ, հետո տեսնում եմ, որ կյանքը նրանցից ավելի մեծ կերպար է ստեղծել, քան ես կստեղծեի, և միշտ բախվում եմ այն փաստին, որ նրանք իմ ստեղծածից լիարյուն, հարուստ ու դիմացկուն են: Իրականության մարդիկ մի անլսելի ելևէջով, աննշան մի դեպքով ամեն անգամ գալիս-փշրում են իրենց մասին իմ պատկերացումների կաղապարները, և հասկանում եմ, թե այդ իրական, այդ եզակի, այդ մեծ տաճարի առջև ինչ չնչին մանրակերտվածք է եղել իմ ներսի Թաջ-Մահալը: Մեկառմեկ բոլորը կենդանու, ասենք ձիու, կամ մեծ ստեղծագործության՝ «Անուշի» կատարելություն ունեն: Կարելի էր ու պետք էր նույնությամբ գրականություն փոխադրել, բայց որովհետև մարդիկ են՝ երեխաներով, թոռներով ու ծոռներով, կյանքով, արել են նաև այնպիսի բաներ, որ չպիտի աներեն և որը տարիքն առնելուց հետո նաև իրենց է անբարոյական թվում, ստիպված եմ լինում անունները փոխել:

140 տարի առաջ իմ Օհաննես պապը եկել-հիմնադրել է մեր Սհնիձոր գյուղը: Ջորայր Խալափյանն ասաց՝ չե՞ս կարծում, որ Սհնիձորը հնչյունափոխված Օհանաձորն է: Գուցե իրոք

այդպես է: Ես ուզում եմ կրկնել իմ պապի փորձը գրականության մեջ՝ հիմնել իմ գյուղը, և վստահ եմ՝ որ հաջողելու եմ: Երբ ես եկա՝ Սհնիձորը կար, Ծմակուտը չկար: Ծմակուտը իրական Սհնիձորի և այդ Սհնիձորի իմ սիրո միությունն է: Ծմակուտը լինելության մեջ է, քանի ես կամ՝ Ծմակուտը փոփոխվելու, մեծանալու, բազմամարդ է դառնալու: Ծմակուտը իմ սերն է, իմ վերաբերմունքը, իմ տագնապը մարդու համար: Ծմակուտը ես եմ: Կինոգործիչները չգիտեն, որ Ծմակուտը Սհնիձորն է՝ գումարած իմ սերը: Գնում Սհնիձորը նկարում են, բայց իմ սիրո փոխարեն ստեղծագործող մարդու իրենց սերն էին նկարելու, որը չգիտեմ իրենք ունե՞ն, չունե՞ն, իրենց ֆիլմերից դատելով՝ չունեն, և իրենց Ծմակուտը չի կայանում:

Ռոստոմը, նրա քույր Շուշանը, Թևանները, Օհանը, Աղունը, Սիմոնը, ձիերը, շները, կովերը՝ իմ բոլոր հերոսները իմ ապագա բոլոր գործերի մշտական բնակիչներն են: Նրանք բոլորը միասին ժողովուրդ են, եթե բեմ պատկերացնենք՝ ֆոն, խոռ. բեմառաջը տրված է հիմա երկու-երեք հոգու, իսկ ժողովուրդը երգում կամ ողբում է և կամ ուղղակի նայում, մի խոսքով՝ անընդհատ կա: Հետո գլխավոր կերպարը կարող է անցնել խոռ, և խոռից կարող է բեմառաջ ելնել մեկ ուրիշը: Նրանք պիտի միմյանց հարսանիքի մասնակցեն, իրար քաղեն, իրարու օգնեն ու մխիթարեն: Երկու հորեղբայրս, որ ապագա գործիս հիմքն են լինելու, մեռան, և ես նրանց թաղմանը չգնացի, և դեռ չեմ գնում գյուղ, որպեսզի այն լանջերը, արահետները, ուր նրանց էի թողել, թափուր չտեսնեմ...

– Դուք շուտով կավարտեք «Տախը» վեպը: Ի՞նչ սպասումներ ունեք:

– Առաջին անգամ եմ բախվում այն ծանր փաստին, որ մի կազմի մեջ մի գործ եմ ներկայացնելու: Ժողովածուն այլ է, մեկը չհավանեն՝ գուցե մյուսը հավանեն: Վեպը տագնապս և հպարտությունս է: Գիտեմ, որ փրկված էջեր, հրաշալի գրած հատվածներ ունեմ, բայց իմ պահանջն ինձանից և իմ գրչեղբայրներից՝ եղնաթռիչ կամուրջի կատարելությամբ գործ

ստեղծելն է: Կարծես թե վեպ չի, էքսկուրսները շատ են, բայց մեծ է նաև ընդգրկումներիս հավակնությունը: 700 էջը կա: Եվ վերջացնելուց առաջ և՛ ժանրի առջև մեղանչած լինելու վախն ունեմ, և՛ հպարտությունը՝ թե այսքան նյութ արդեն շարադրված է: Տեսնենք:

Հարցազրույցը վարեց Իգնատ ՄԱՄՅԱՆԸ
«Գրական թերթ», 23.11.1984 թ.